

ՊԵՏՔ Է ԶԳՈՅՇ ԼԻՆԵԼ

Ներկայ թուականը մերկացումների թուական եղաւ։ Մերկացումներ գողութեան, խարդախութեան, դրամաշորթութեան, կաշառակերութեան, լրտեսութեան և այլ այս կարգի ստոր յանցանքների մէջ։ Եւ դատապարտութեան սիւնին մեխուեցին, ոչ թէ հասարակութեան ստորին խաւի ներկայացուցիչները, այլ ինտէլիգէնտ մարդիկ, սկսած յեղափոխութեան առաջնակարգ ներկայացուցիչներից, մինչև պետական բարձրաստիճան պաշտօնեաները։

Մենք հայերս էլ, կամայ թէ ակամայ վարակուեցինք նոյն ախտով, մեզանում էլ երևացին նոյն յանցանքները կամ յանցանքների մերկացումներ, ուր դարձեալ հանդէս են գալիս խիստ ծանօթ դէմքեր, ժողովրդի խաւից միշտ բարձր կանգնած դասակարգերից։

Բայց ամենից անակնկալը և ապշեցուցիչը պէտք է ըստ Սպանդարեանի դէմ յարուցուած մեղադրանքն է, Դաշնակցութեան օրգանի—«Դրօշակ»-ի կողմից։

«Դրօշակ»-ի ասելով 1904 թուականի յունվարից ի վեր «Նոր-Դար»-ի խմբագիր Ս. Սպանդարեանը պարապելիս է եղել լրտեսութեամբ, ստանալով կառավարութիւնից յայտնի վարձատրութիւն։

Սպանդարեանը լրտես. ինչ դառն ու սղակալի հիսաթափութիւն նրա թերթի «Նոր-Դար»-ի աշխատակիցների մէջ։ Տասնեակ տարիների ընթացքում մենք զրկել էինք «Նոր-Դար»-ը որպէս մի իդէալական սրբութիւն, բայց դուրս է գալիս, որ մենք խաբուած ենք եղել, իդէալական սրբութիւն ասածդ եղել է մի գարշելի ու թունաւոր սև օձ։

Բայց ճիշտ է մեղադրանքը, իրաւ է, որ անհերքելի ու ջախջախիչ են փաստերը։

Սա այն տարակուսական հարցերից մէկն է, որ համ փափագում ես լուծուած տեսնել, համ էլ զարհուրում ես նրանից:

Փափագում ես՝ լսելով խղճիդ ձայնին, որ մըմնջում է քեզ «Դա զրպարտութիւն է»։ զարհուրում ես՝ նայելով մարդկային կեանքի բարոյական սնանկութեան, ապակաշնութեան վրայ, որ կասկած է զարթեցնում քո մէջ թէ՛ Սպանդարեանն էլ կարող է մէկը լինել այդ բարոյական սնանկներից:

Ոչ պաշտօնը, ոչ կոչումը, ոչ փառաւոր անցեալը, ոչ իսկ անաղարտ համբաւը և ոչինչ այլևս չեն կարողանում փրկել մարդուն ծանրագոյն ամբաստանութիւններից. սրանք այլևս ամենագոր փաստեր չեն, որոնց վրայ հիմնուելով մարդս կարողանար վստահօրէն ասել «Դուք սուտ էք խօսում, ստոր զրպարտիչներ էք»:

Սա մի այնպիսի դրութիւն է, երբ տանջւում, տառապում են մարդուս հոգեկան զգացմունքները և տառապում են այն սարսափելի համոզմունքից, թէ չը կայ այլևս ոչ մի սրբութիւն:

Բայց որքան խոր ու անծայրածիր է այդ տառապանքի ովկիանոսը, այնուամենայնիւ մարդս յուսահատական ճիգ է գործ դնում նրանից ազատուելու, աշխատում է գտնել նորանոր փաստեր իրեն յուսահատութեան ու տառապանքը ծովը նետող փաստերի դէմ կռուելու, նրանց ջախջախելու, աշխատում է իւր կասկածների մռայլ խաւարը փարատող լուսի մի թոյլ ճառագայթ որոնելու համար:

Չեմ թագնում ասել, որ մի քանի շաբաթ է, ինչ ես մի այդպիսի յուսահատ որոնումների ետեքց եմ: Ինձ այլևս չի հետաքրքրում Սպանդարեանի անձնաւորութիւնը իւր անհատական կամ հասարակական ապագայով: Եթէ նա լինէր մի սոսկական մարդ, ծնուած իւր համար ու ապրած իւր օգտին, թող որ նա էլ զոհ գնար թէկուզ զըրպարտութեան կամ թիւրիմացութեան, որպէս վերջին մի քանի տարուայ ընթացքում զոհուեցան շատերը, Ինձ հա-

մար թանգարժէք է նրա տարիների ընթացքում քարոզած գաղափարները, թէկուզ նրանցից շատերի հետ ես համաձայն էլ չը լինէի: Ահա այդ գաղափարները ցեխից ու մրից լուանալու համար է իմ որոնումները: Եւ պէտք է ասեմ, որ Սպանդարեանի անմեղութեան մէջ լիակատար համոզուելու չափ փաստեր գտնել ինձ չը յաջողուեց, բայց մեղադրանքը կասկածի տակ դնող որոշ հետեւանքի հասայ, որ կուզէի այս հարցով հետաքրքրուողների քննութեան ենթարկել:

Յայտնի է, որ Սպանդարեանի դէմ եղած մերկացումներից ամիսներ առաջ, նոյն ձևի մերկացումներ եղան ռուս գործիչների մասին, ինչ որ Մենշիկովի կողմից: Յայտնի դարձաւ նոյնպէս, որ Մենշիկովը նախկին պաշտօնեայ է Պետական գաղտնի ոստիկանութեան դեպարտամենտում և մէկը աչքի ընկնող պաշտօնեաներից:

Այս պարոնի արած մերկացումները ահագին խլրտում ձգեցին Ռուսաստանի մտաւորական, մանաւանդ յեղափոխական շրջանում, մինչև անգամ հարցը հասաւ Պետական դումային:

Սրանից յետոյ, երբ «Դրօշակ»-ը լոյս ընծայեց իւր մեղադրականը Սպանդարեանի մասին, իսկոյն և եթ մի թոյլ կասկած ծագեց իմ գլխում թէ, թերևս «Դրօշակ»-ի փաստերի աղբիւրն ևս կազմում է նոյն Մենշիկովը, եւ դուրս եկաւ, որ ես սխալուած չէի, քանզի երբ Սպանդարեանը ճանապարհ ընկաւ դէպի Եւրոպա, թերևս Դաշնակցութեան պահանջմամբ հանդէս եկաւ Մենշիկովը, պնդելով, որ «Դրօշակ»-ի հաղորդածը զրպարտութիւն չէ, այլ հիմնուած է ջախջախիչ փաստերի վրայ, որոնք գտնւում են իրեն ձեռքում...

Այս դէպքից յետոյ ինձ համար ցանկալի էր պարզել Մենշիկովի դէմքը, որի ասելով Ռուսաստանի աւանաւոր ինտելիգենցիայի մէջ էլ կան նոյն ախտով մրոտուածներ:

Առաջին հարցը, որ ծագեց իմ մէջ, այն էր—արդեօք այդ Մենշիկովը մի վարձկան պրօփօկատօր չէ: Ինչո՞ւ նա

թողեց իւր պաշտօնը, որ ըստ լրագրական տեղեկութիւնների, նրան փայլուն ապագայ էր խոստանում և ինչո՞ւ նա անցաւ յեղափոխութեան կողմը, անցնելով Ներսիս և իւր հետ տանելով նոյն դեպարտամենտի կարեւոր վաւերաթղթերը:

Այս հարցերի մասին, որոնք կարող էին մի աստիճան պարզել Մենշիկովի դէմքը, որոշ տեղեկութիւններ չը կան կամ եթէ եղել են, իմ ձեռքը չեն անցել:

Բայց կայ մի բան, որ կազմում է իմ գլխում ծագած կասկածի առանցքը:

Մենք գիտենք, որ կրամօլան Ռուսաստանում ջնջելու կամ թուլացնելու համար եթէ գոյութիւն ունին որոշ ընդդէսիւսներ, յանուն հրատարակուած ժամանակաւոր օրէնքների, կայ նաև սեհարիւրակային մի խմբակ, որ կառավարութիւնից անկախ գործում է Ռուսաստանում: Այս խմբակը կառավարութիւնից աւելի անողոք է դէպի յեղափոխական տարրերը և ստորային միջոցների ու զէնքերի մէջ, որոնցով նա կռուել է ու կռոււմ է: Զանազան ժամանակներում և զանազան անկիւններում կազմակերպուած խմբական ջարդերից ու անհատական սպանութիւններից բացի, այդ խմբակը յաճախ գործել է զանազան խարդաւանքներ, մտքերի պղտորումներ, պրօփօկացիա...

Արդեօք չի՞ կարող պատահել, որ Մենշիկովը սև հարիւրակայիներէից վարձուած մի պրօփօկատօր լինի:

Ես յաւականութիւն չունիմ պնդելու, որ այդ այդպէս է, ոչ էլ իմ ձեռքում կայ որևէ փաստ, բայց զանազան երևոյթներից նման հետեւութիւններ անելու իրաւունք ունի ամեն ոք:

Զը պէտքէ մոռանանք, որ մի այսպիսի կասկած նոյնքան մեծ արժէք է ստանում, որքան մեծ է պրօփօկացիայի միջոցով յեղափոխութեան վարկաբեկման արժէքը հասարակութեան աչքում՝ մի կողմից, նոյն պրօփօկացիայի շնորհիւ հաւանական երկպառակութեան և անվստահու-

Թեան արժէքը յեղափոխական շարքերի մէջ՝ միւս կողմից:

Սա մի գնդակ է, որ արձակող կողմի համար անվտանգ լինելով հանդերձ, կարող է անվրէպ երկու թանկագին որս մի անգամից զարկել և այն մահացու կերպով:

Այն բեակցիան, որ այսօր նկատելի է հայերիս մէջ թէ Ռուսաստանում և թէ Տաճկաստանում, հետևանք է յեղափոխականների արատաւոր ընթացքի: Դաշնակցութեան արած այն յայտարարութիւնը, թէ Միհրանը սպանուեց իւր կատարած մատնութիւնների համար, բաւական է, որ ժողովուրդը դարձնի իւր երեսը, մանաւանդ որ նոյն Միհրանն էլ նոյնպիսի մեղադրանքներ բարդում էր ուրիշների վրայ:

Մի սև բիծ աղամանդի վրայ բաւական է, որ նա կորցնի իւր արժէքը:

Եթէ մի թոյլ կասկած անգամ ունենալու լինինք, թէ Մենշիկովը կարող է վարձկան պրօվօկատոր լինել և եթէ ընդունենք, որ մի այդպիսի պրօվօկացիա կարող է յեղափոխութիւնը վարկաբեկ անել ժողովրդի աչքում և մահացու թշնամանք սերմանել յեղափոխականների մէջ, այս դէպքում Մենշիկովի կամ նմանների ձեռքում գտնուած վաւերագրերը կը կորցնեն իրենց նշանակութիւնը: Մենք գիտենք, որ կրամօլան արմատախիլ անելու համար միջոցների մէջ խտրութիւն չի դրոււմ:

Այս կասկածը, որի վրայ պնդելու յաւակնութիւնը չունիմ, ինձ թելադրում է դիմել մեր յեղափոխական գործիչներին, միշտ զգոյշ լինելու բարի խորհրդով:

Մի Մենշիկով, որ դեռ երեկ գաղտնի ոստիկանութեան պաշտօնեայ էր և ով գիտէ այդ պաշտօնի մէջ ինչ չարիքներ է գործել, նրա խօսքը և ձեռքի դօկումենտները աւելի մեծ արժէք չեն կարող ունենալ, քան Սպանդարեանը, որ հասարակական գործչի անցեալ ունի:

Մենք պէտք է գիտնանք, որ տաճնեակ հազարից մի հատ թշուառական հազիւ կը գտնուի, որի համար պատիւը արժէք չունենայ, այնինչ բիւրաւորների համար պատիւը

ամենաթանկագին սրբութիւնն է։ Այդ է պատճառը, որ մատնիչներէ նման ստոր արարածները այնքան չնչին տոկոս են կազմում, որ կոտորակներով էլ դժուար է արտայայտել։

Եթէ գոյութիւն ունի գէթ մանանեւի հատիկի չափ կասկած թէ՛ Սպանդարեանի դէմ յարուցուած մեղադրանքը արդիւնք է թիւրիմացութեան կամ պրօփօկացիայի,— այն ժամանակ վերջնական որոշում կայացնելուց պէտք է զգուշանալ։ Պատուի դէմ այնքան թեթևութեամբ խաղալու մէջ սխալուելը նոյնքան մեծ յանցանք է, որքան ինքը՝ մատնութիւնը, մահաւանդ երբ մի այդպիսի յանցաւոր սխալ գործողը կը հանդիսանայ մի ամբողջ կազմակերպութիւն։

Սրա հակառակ՝ հապճէպ վճիռ կայացնելուց զգուշանալը ոչ մի վնաս չի բերի, նոյնիսկ այն դէպքում, երբ ապագայում անհերքելիօրէն ապացուցուի Սպանդարեանի յանցաւոր լինելը։ Այսպիսով եթէ Սպանդարեանը, որպէս մատնչութեան մէջ կասկածելի, չի պատժուի, նա չի էլ ազատուի կասկածանքից, փնտրուի բարոյապէս ու հոգեպէս կիսամեռ։ Իսկ այսպիսի կիսամեռ դրութեան մէջ գտնուող մարդիկ ոչ միայն այլևս չեն կարող որևէ փնտա բերել, այլևս չեն կամենայ։

Այն ինչ ժամանակը կարող է պարզել ամեն մի ճշմարտութիւն, որքան էլ նա թանձր քողով ծածկուած լինի։ Եւ դա շատ էլ երկար չի բաշի։ Մենշիկովը արատաւոր ակնարկներ է արել Ռուս ժողովրդի ականաւոր ինտելիգէնցիայի հասցէին ևս, որն աւելի ձեռնհաս է ճշմարտութիւնը երևան հանելու։

Mars